ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՀՐԱՊԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 4-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2022 թվականի հոկտեմբերի 21-ի հ.1103/47978-22 գրությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Գևորգ Չաուշի, Շիրազի և Մազմանյան փողոցների հատման վայրում գտնվող հրապարակն անվանակոչել Եգիպտոսի հրապարակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՀՐԱՊԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից ներկայացվել է առաջարկություն Երևան քաղաքում Եգիպտոսի կամ Կահիրեի փողոց անվանակոչելու վերաբերյալ, ինչին զուգահեռ Կահիրեում կիրականացվի Հայաստանի կամ Երևանի անվանմամբ փողոցի անվանակոչություն:

Նշված առաջարկի նպատակահարմարությունը հիմնավորվում է մի շարք հանգամանքներով և պատճառներով, որոնց թվում են հայ-եգիպտական բազմադարյա բարեկամական հարաբերությունները, Եգիպտոսի բարյացակամ վերաբերմունքը հայ համայնքի նկատմամբ, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանությունից հետո, հայազգի որոշ անհատների մեծ ներդրումը ժամանակակից Եգիպտոսի կայացման գործում, ՀՀ-ԵԱՀ քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը, Եգիպտոսի կարևոր դերը և քաղաքական նշանակությունն արաբական աշխարհում, Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջաններում, ինչպես նաև հաշվի առնելով, որ 2022թ. լրացել է ՀՀ և ԵԱՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը:

Բացի այդ ակնկալվող հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի 6-րդ նիստի ընթացքում նախատեսվում է Երևան և Կահիրե քաղաքների միջև համագործակցության և քույր քաղաքներ հռչակելու մասին համաձայնագրի ստորագրումը և անվանակոչությունն այդ իրադարձության նշանավորման լավ միջոց կլինի: 2023թ. ընթացքում հայկական կողմն ակնկալում է նաև ԵԱՀ Նախագահի և ԱԳ նախարարի պաշտոնական այցերը Հայաստան և այս առնչությամբ կարելի է դիտարկել նաև բացման արարողություն իրականացնելու հնարավորությունը:

Երևանի քաղաքապետարանը նպատակահարմար է գտնում Երևանում անվանակոչել Եգիպտոսի հրապարակ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Գևորգ Չաուշի, Շիրազի և Մազմանյան փողոցների հատման վայրում գտնվող հրապարակն անվանակոչել Եգիպտոսի հրապարակ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՀՐԱՊԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Եգիպտոսի հրապարակ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՀՐԱՊԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Եգիպտոսի հրապարակ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ